

Վեհափառ ահայրապետը եւ Ազգային պահանջատիրութիւնը

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դարաւոր պատմութեան նորագոյն էջերը կը բացուին Օսմանեան կայսրութեան եւ ապա թուրք ազգայնական հանրապետականներու կողմէ գործադրուած հայոց ցեղասպանութեամբ, որ իսկեւ մէկ ու կէս միլիոն հայ նահատակ: Հազարաւորներ աքսորուեցան դէպի արաբական անապատները, մեծ մասը ինկաւ աքսորի ճանապարհին, իսկ մաս մը՝ կոտորակուած, թշուառ ու անտէր հասաւ Սուրիա, Լիբանան, Իրաք, Պաղեստին: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւս պարտադրուեցաւ իր հօտին ճակատագիրը՝ լքել ազգային-եկեղեցական հարիւրաւոր կալուածները, հարստութիւնն ու հողերը, դառնալ աքսորեալ ու աստանդական, հասնիլ Լիբանան, ու հաստատուիլ Անթիլիասի ծովափին, խեղճ ու թշուառ պայմաններու մէջ:

Պատմական այս մրրկայոյզ համայնապատկերին վրայ, հիմնայատակ կերպով քանդուած ու քայքայուած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կը ստանձնէր տարագիր հայու ճակատագիրին տէրը ըլլալու դժուարին ու ծանր պատասխանատուութիւնը: Հազարաւոր որբերու, անտունիներու, սարսափելիօրէն դժնդակ ու թշուառ պայմաններու մէջ տուայտող զանգուածի մը հայեացքը ուղղուած էր Հայ Եկեղեցւոյ վրայ, հոն գտնելու իր իրավիճակին լուծումը, հոնկէ ստանալու թափառական ու թշուառական իր գոյավիճակին վերականգնումը: Իր հօտին հոգեւոր տիրութիւնն ու անոր ճակատագիրին տէրը ըլլալու պատասխանատուութիւնը չվիատեցուցին երբեք դարաւոր այս Սուրբ Աթոռին հայրապետները. իրենց յոյսն ու հաւատը «դայիմ» բռնած, անոնք վերականգնեցին **Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը**՝ եւ հայրապետական այս Սուրբ Աթոռին ճամբով Սփիւռքի մեր գաղութները:

Հայոց ցեղասպանութեան ճանաչումն ու հատուցումը դարձան անբաժան մասը Սուրբ Աթոռի համազգային առաքելութեան: Արդարեւ, հարիւրամեակին առաջին կէսը ծառայեց կոտորուած ժողովուրդի մնացորդացին վերակենսաւորման ու վերականգնումին: Իսկ Հայոց Ցեղասպանութեան յիսնամեակը եղաւ սկիզբ ազգային պահանջատիրութեան ձեւաւորման եւ ծաւալման: Հարիւրամեակի վերջին կէսին զարգացան Հայոց Ցեղասպանութեան պատմական իրողութիւնը ուսումնասիրելու եւ իրաւական հիմքեր պատրաստելու դժուարին աշխատանքները: Բազմաթիւ հրատարակութիւններ՝ վաւերական տեղեկութիւններով հարստացուցին հայոց ցեղասպանութեան փաստարկումներու դիւանը:

Հայ դատ յղացքը մարմին առաւ ու սկսաւ հայոց ցեղասպանութեան ճանաչ-

ման եւ ազգին բռնաբարուած իրաւունքներու պահանջին միջազգային գործընթացը: Այս աշխատանքներուն մէջ անուրանալի էր դերը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան: Ան մեծ թափով լծուեցաւ ցեղասպանութեան ճանաչման բանաձեւերու ընդունման քուլիսային աշխատանքներուն՝ երոպական եւ միջին արեւելեան պետութիւններու մօտ: Քաղաքական վիթխարի գործունէութիւնը պսակուեցաւ յիսնամեակի նշումով եւ Պիքֆայայի բարձունքին դէպի երկինք խոյացող ցեղասպանութեան յուշակոթողի բարձրացումով:

1960-ական թուականներուն, միջ-եկեղեցական յարաբերութիւններու զարգացումով, Կաթողիկոսութիւնը մասնակցեցաւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (ԵՀԽ), միջ-կրօնական երկխօսութիւններու, ժողովներու, համագումարներու եւ 1991-ին ստանձնեց անոր գործադիր գերագոյն մարմնին ատենապետութիւնը, վարելով իմաստութեամբ եւ հեղինակութեամբ տասնհինգ տարիներ շարունակ՝ յանձինն Լիբանանի հայոց թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Արամ Արք. Քէշիշեանի, ապա Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ: Ահա այս ժամանակահատուածին մէջ Կաթողիկոսութիւնը բացուեցաւ միջազգային հանրութեան, Անթիլիասը դարձնելով միջ-եկեղեցական, միջ-կրօնական, քրիստոնէայ-իսլամ երկխօսութեանց եռուն կեդրոնի, իր վրայ հրաւիրելով տեղական, շրջանային եւ միջազգային լուսարձակները: Իսկ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի միջոցով աշխարհի մեծ ոստաններու մէջ, բոլոր առիթները օգտագործեց խիզախօրէն Հայոց Ցեղասպանութեան անժխտելի իրողութիւնը ու այժմեականութիւնը արծարծելու՝ պատասխանատուութեան հրաւիրելով միջազգային հանրութիւնը հայոց ցեղասպանութեան անպատժելիութիւնը դատապարտելու, ճշմարտութիւնը բարձրաձայնելու եւ արդարութիւն պահանջելու: Անթիլիասը փաստօրէն դուրս եկած էր սոսկ հայ ժողովուրդի վշտի ու տառապանքի փրկարար լաստը ըլլալու վանական կղզեակէն ու վերածուած՝ շրջանային ու միջազգային երկխօսութեան, ազգային պահանջատիրութեան, արդարութեան եւ հաշուետուութեան հարթակի:

Ժամանակի հոլովոյթին հետ, սակայն, կ'անհետանար առաջին սերունդը, իր հետ տանելով ընդմիջտ, դեռ չգրուած ցեղասպանութեան պատմութիւնը: Կը մշուշապատուէր յիշողութիւնը հասնող սերունդներուն՝ սփիւռքեան պայմաններու պարտադրած այլասերման պարտադրանքներուն դիմաց: Անակնկալ ձեւով, սակայն, եկան նոր օրեր, նոր զարգացումներ, նոր կացութիւններ՝ նոր անդրադարձ ու նոր դիրքաւորում պահանջող: 1988-ի Լենինականի երկրաշարժն ու Ղարաբաղեան ազատագրական պայքարի շարժումը եւ 1991-ին Հայաստանի անկախացումը ցնցեցին հայաշխարհը՝ հայրենիքէն մինչեւ հեռաւոր Սփիւռք, նոր թափ եւ ուժ ներշնչելով տակաւ նահանջող հայու ինքնութեան, ոգեւորելով զանգուածները համախմբուելու ազգային կառոյցներուն ու գործօններուն շուրջ, կայծ տալով ազգային պահանջատիրութեան զարթօնքին:

Քաղաքական, ազգային եւ համազգային այս համայնապատկերին վրայ, Արամ Ա. Վեհափառ Հայրապետը կը ստանձնէր Սփիւռքը առաջնորդելու եւ

Մփիւռքի անունով խօսելու պատասխանատու դերը: Եւ չուշացան Հայաստանի Հանրապետութեան պետական այրերու քաղաքական համաձայնութիւններուն մէջ համազգային շահերու պարտադրական կամ զիջողական դիրքորոշումները, որոնց Կիլիկիոյ Հայրապետը անդրադարձաւ ամենայն խստութեամբ, դատապարտելով եւ զգաստութեան հրաւիրելով նոր իշխանները, համազգային շահերը սակարկութեան նիւթ չդարձնելու միջազգային սակարաններու մէջ:

Կը մօտենար Հայոց Տեղասպանութեան հարիւրամեակը եւ անոր հետ ազգային պահանջատիրութիւնը նոր հրամայականներ կը պարտադրէր: Համայն հայութեան հայեացքները դարձեալ կ'ուղղուէին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, անկէ առնելու իր ուղղութիւնն ու ներշնչումը: Եւ չուշացան քաջ քայլերը, շնորհիւ Արամ Ա. Հայրապետի ապագայատեսիլ եւ յանդուգն ծրագիրներուն: Ան պայծառացուց Հայ Եկեղեցին ու հայ մարդու հոգին, յիշողութիւնը վերականգնող քարակերտ յուշարձաններու կառուցումով, ուրկէ ղօղանջեցին մեր նահատակներու արդարութիւն աղաղակող պատգամը՝ *Յիշել, Յիշեցնել ու Պահանջել* (ի դէպ՝ պատմութեան համար յիշենք, որ այս բանաձեւումին հեղինակը Արամ Վեհափառն է), նոր շունչ ու նոր ոգի ներշնչելով համայն հայութեան պահանջատիրութեան բացուող զարթօնքին:

Նորին Սրբութիւնը Տէր Զօրի, անշունչ ու մահասարսուռ անապատը, մեր ժողովուրդի համայնական գերեզմանը՝ կենդանացուց բիւրաւոր նահատակներու մասունքներով ճարտարապետուած հիասքանչ յիշատակարանով, զայն վերածելով ազգային ուխտավայրի, գալիք սերունդներուն տալով իրենց պապերուն հետ հաղորդուելու, դէռ կոտտացող ցալի ու տանջանքի նշխարներով: Եւ Վեհափառի թափօրին շարան-շարան եկան միանալու նորահասակ պատանիներ մեր կրթական օճախներէն եւ պեղեցին աւագներէն իրենց պապերուն մասունքները, եւ երդուեցին վրէժ լուծել՝ «յիշելով, յիշեցնելով ու պահանջելով»:

Կառուցուեցաւ Մփիւռքի ամբողջ տարածքին դէռ նմանը չունեցող հայոց ցեղասպանութեան Որբերու Թանգարանը, հազարաւոր որբերու տան՝ «Թոչնոց Բոյն»ի մէջ: Իւրայատուկ թանգարան մը, որ գալիք սերունդներուն կը յանձնէր իրենց հայրերուն ու մայրերուն պատմութիւնը՝ ազգային յիշողութիւնը եւ պատասխանատուութեան եւ յանձնառութեան հրաւիրելով զիրենք՝ չմոռնալու անցեալը: Այսօր, հոն կ'այցելեն հայեր եւ օտարներ, ու կը գտնեն պատասխանը իրենց հոգին կրծող հարցումներուն՝ ինչ պատահեցաւ հայ ժողովուրդին, ինչպէ՞ս հասան այստեղ, եւ ինչպէ՞ս յաղթեցին մահուան ու թշուառութեան: Հարցումներ, որոնց պատասխանը կը ստանան թանգարանի պատերէն կախուած նկարներէն եւ արձանագրութիւններէն: Առաւել, այս թանգարանով Վեհափառ Հայրապետը կը դիմէ մարդկութեան անպատասխանատուութեան ու անտարբերութեան, հաշիւ կը պահանջէ՝ ինչո՞ւ եւ ինչպէ՞ս թոյլ տուին որ ամբողջ ժողովուրդ մը բնաջնջուի ու արմատախիլ ըլլայ իր հայրենիքէն: Այս թանգարանը բողոք է ու ցասում մարդկութեան անտարբերութեան ու դահիճին ժխտողականութեան դէմ:

Իսկ Պիքֆայան, իր վերանորոգ կառույցով՝ աստուածաշնորհ ու խնկելի սուրբերու ներշնչած հաւատքով, երկնապալաց գմբէթէն ղօղանջող զանգերով ու նահատակաց յուշակոթողին դէպի երկինք սլացող խոյանքով, Վեհափառը դարձուց մեր համազգային յանձնառութիւններուն նոր ուխտավայրը:

Անթիլիասի մայր տաճարի աջին բարձրացուց Սարդարապատ կերտողներու, հայոց պետականութեան խորհրդանիշ՝ Մայիսեան անկախութեան կոթողը, կտակելով սերունդներուն վեց դարերու ստրկութեան ամօթէն յառնած անկախ պետականութեան կենսորոշ հրամայականի խորհրդանիշն ու հպարտանքը: Արդարեւ, Ապրիլեան եղեռնագործութեան յուշակոթողը մայր տաճարի ձախին, եւ յաղթանակի կոթողը աջին, գալիք սերունդներուն կը պատգամեն նայիլ ցեղասպանութեան յուշակոթողին ու անկէ ցուացող յանցագործութեան ճշմարտութիւնը վկայելով, ներշնչուիլ Մայիսեան յուշակոթողի պատգամով՝ ազգային հաւաքական կամքի ու մտքի, միասնական պայքարով ձեռք բերուած անխորտակելի յաղթանակով: Մայիս 28-ի կոթողով, Արամ Ա. Վեհափառ Հայրապետ նահատակ բանաստեղծին տեսիլքէն յառնած, *«վարդահէղէղ արշալոյսն է»* որ կը կտակէ գալիք սերունդներուն, ամրապնդելու հայուն հաւատքը՝ լինելութեան, տաղելով անոնց հոգիներուն վրայ հաւատալու մեր ժողովուրդի ապագային, եւ անոր խորհուրդով պողպատացած՝ կերտելու մեզ սպասող ամբողջական, միացեալ եւ մէկ Հայաստանը:

Եւ այսպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կը ճառագայթէր որպէս Սփիւռքի փարոսն ու մեր ազգային լինելութեան *«գրահանդերձը փայլուն, մինչ իր խաչերն են դաշոյն եւ երգն է միշտ յաղթութիւն»:*

Պատահական չէ, որ այդպէս եղաւ եւ աւելիով է՝ նաեւ այսօր, որովհետեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետը՝ Արեւմտահայաստանի մեր բռնագրաւեալ հայրենիքին իրաւական տէրն ու ներկայացուցիչը եւ անոր ժողովուրդին անմիջական ժառանգորդը, արծուաբիբ հայեացքով կը հսկէ մեր եկեղեցւոյ եւ հայ կեանքի պահանջատիրութեան առնչուող բոլոր հարցերուն, որպէսզի ամենօրեայ մաշեցնող պայքարէն յոգնած, զանգուածները չվհատին ու պարտութեան մատնուած՝ զիջողականութեան ջանձնուին: Ա՛յս հաւատքով ու ա՛յս տեսլականով իր հովուական առաքելութիւններով ու հայրապետական կոնդակներով Արամ Ա. Կաթողիկոս գործի լծեց Սփիւռքի իր բոլոր զուակները, թեմերը, դպրոցները, կազմակերպութիւնները, մտաւորականները, եւ շարժեց զանգուածները՝ դէպի պահանջատիրական պայքարի դաշտ:

Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակը բացաւ նոր էջ ու նոր հորիզոններ ազգային պահանջատիրութեան եւ Հայաստան-Սփիւռք գործակցութեան: Մեր ժամանակներու յատկանշական երեւոյթը, որ դարձաւ մեր ազգային միասնականութեան հիմքը, Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակն ու հարիւրամեակի Հայաստան-Սփիւռք Յանձնաժողովն էր: Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակը համախմբեց ովկիանոսներէն անդին ծուարող հայն ու համայն հայութիւնը մէկ

ամբողջութեան շուրջ: Կը փակուէին տխուր ու վիրաւոր էջերը մեր պատմութեան, կը կամրջուէր անջրպետը Ս. Էջմիածինի եւ Անթիլիասի միջեւ, կը մերձենային տասնամեակներով իրարամերժ կողմերը, անհանդուրժողութիւնը կը զիջէր գործակցութեան եւ վերջապէս, Հայոց Ցեղասպանութեան ու ազգային պահանջատիրութեան առջեւ կը խոնարհէին ու կը համախմբուէին բոլորը, անխտիր:

Հայր, իբրեւ պետականութիւն եւ Սփիւռք, առաջին անգամ ըլլալով քով-քովի կու գար եւ Հայրենիքի եւ Սփիւռքի բաղկացուցիչ բոլոր կողմերու համատեղ ճիգերով կը ճարտարապետէր ազգային Հոշակագիրը: Այս Հոշակագիրը, որուն խմբագրութեան մէջ նաեւ իր վճռորոշ դերը ունեցաւ Արամ Ա. Վեհափառը, եղաւ հիմնաքարը ազգային միասնականութեան եւ հաւաքական կամքի արտայայտութեան: Սա սկիզբն էր ապագայ բոլոր յանձնառութիւններուն, որ կը հաւատանք պիտի շաղախէ Հայրենիքի եւ Սփիւռքի իղձերը, պիտի խարսխէ բովանդակ հայութիւնը ազգային մէկ գաղափարախօսութեան շուրջ, պիտի կարողանայ Սփիւռք եւ Հայրենիք մէկ ամբողջութեան վերածել եւ մեր ազգային հաւաքական տենչերու տեսլականը կերտել՝ ձգտելու ազգային պահանջատիրութեան ձեռքբերումներուն:

Որպէս արդիւնք ազգային միասնականութեան, Հայաստան եւ Սփիւռք կ'առնէին պատմական քայլեր:

Հայ Եկեղեցին որոշում կ'առնէր՝ սրբադասել հայոց ցեղասպանութեամբ նահատակուած մէկ ու կէս միլիոն անմեղ զոհերը, որովհետեւ անոնք զոհուած էին «վասն հաւատոյ ու վասն հայութեան», անշեղօրէն փարած քրիստոնէական կրօնքին ու հայ ինքնութեան: Սրտառուչ ու հիասքանչ այս արարողութիւնը կատարեցին Հայ Եկեղեցոյ զոյգ հայրապետները՝ Ամենայն Հայոց Գարեգին Բ. եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսներ, ներկայութեամբ Հայաստանի Հանրապետութեան նախագահին ու պետական աւագանիին ու բազմահազար հայ եւ օտար բարձրաստիճան հիւրերու: Շարականներու մեղեդիին միախառնուած հնչեց պատգամը Արամ Ա. Վեհափառ Հայրապետին. –

«Հարիւր տարիներ շարունակ սրբացնող, հզօրացնող ու կենսատրոյղ ներուժ դարձան մեր նահատակները իւրաքանչիւր հայու եւ ողջ հայութեան կեանքին մէջ: Հարիւր տարիներ շարունակ մեր նահատակները իրենց արեան վկայութեամբ՝ մեր հաւատքը ամրացուցին. գերագոյն արժէքներու ու վեհ երազներու համար ապրելու ու պայքարելու մեր կամքը կռանեցին. հող ու ինչք կորսնցուցած եւ որք ու գաղթական դարձած մեր ժողովուրդին գոյատեւելու եւ իր իրաւունքներուն վերատիրանալու յոյսը արծարծ պահեցին:

«Սա պահուն, դարեր շարունակ իր բիրաւոր նահատակներու արիւնով իր կեանքը թրծած ու սուրբերու աղօթքներով իր առաքելութիւնը կենսատրած մեր եկեղեցին ՍՈՒՐԲ կը հոշակէ՝ «վասն հաւատոյ ու հայրենեաց» իրենց անձերը զոհաբերած հայոց ցեղասպանութեան մէկուկէս միլիոն նահատակները»:

Ապա, վերանորոգելով մեր ժողովուրդին յանձնառութիւնը, ըսաւ՝ **«Հարիւր տարիներ, ժողովո՛ւրդ հայոց, յիշեցիր քու նահատակներդ ու հաւատարիմ մնացիր**

անոնց նուիրական կտակին: Պատի՛ւ ու յարգա՛նք քեզի:

«Միշտ յիշե՛՛ սրբացած նահատակներդ, որովհետեւ անոնց արիւնը աւիշը պիտի դառնայ քու զօրութեանդ, եւ երաշխիքը՝ քու յաղթանակիդ:

«Միշտ յիշե՛՛ սրբացած նահատակներդ ու միաժամանակ յիշեցո՛ւր աշխարհին, որ անոնք անցեալին չեն պատկանիր, սոսկ պատմութիւն ու յիշատակ չեն, այլ կ'ապրին իւրաքանչիւր հայու կեանքին մէջ:

«Մեր նահատակները կ'ապրին մեր կեանքին մէջ, որպէս հաւատքի ամրոց՝ մեր բռնաբարուած իրաւունքներու ձեռքբերման պայքարը ամրացնող:

«Մեր նահատակները կ'ապրին մեր կեանքին մէջ, որպէս կամքի դարբնոց՝ մեր պահանջատիրական կամքը կռանող:

«Մեր նահատակները կ'ապրին մեր կեանքին մէջ, որպէս յուսատու աղբիւր՝ մեր յոյսը ամրապնդող:

«Մեր նահատակները կ'ապրին մեր կեանքին մէջ, որպէս «մարտիրոսք երանեալք... որք զլոյսն կենաց զգեցեալ ունին»՝ մեր կեանքի ճամբան երկնային յոյսով յուսագարդող»:

Մեր բիւրաւոր անթաղ մեռելներն էին որ հարիւր տարի ետք յարութիւն կ'առնէին Տէր Զօրի աւագներէն ու յաւիտենութեան երկնակամարին վրայ լուսաւոր ժպիտներով կը դիտէին մեզ՝ բերկրանքով ու մշտնջենական խաղաղութեամբ:

Աշխարհասփիւռ հայութիւնը ազգային միասնականութեան յոյզերով ալեկոծուած, իր պապերու համայնական թափօրին յուղարկաւոր՝ յիշեց իր նահատակները եւ աշխարհին յիշեցուց անոնց սրբագան կտակը::

Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակը համաշխարհային հնչեղութիւն կը ստանար 12 Ապրիլ 2015-ին Ֆրանսիա Ա. Պապի, Հայ Եկեղեցւոյ զոյգ հայրապետներու՝ Գարեգին Բ. եւ Արամ Ա. Կաթողիկոսներու, եւ Կաթողիկէ պատրիարք՝ Ներսէս-Պետրոս ԺԹ. Թարմունիի, Վատիկանի Սուրբ Պետրոսի հազարամեայ տաճարէն հնչող խօսքերով: Ֆրանսիա Ա. Պապը կը նշէր, որ հայոց ցեղասպանութիւնը պատմութեան մէջ կը հանդիսանար առաջինը 20-րդ դարուն գործադրուած հրէշային ցեղասպանութիւններուն, մեղադրելով ցայսօր զայն ժխտող թուրք պետութիւնն ու համայն մարդկութիւնը: Արամ Ա.ի յանդուգն ու խիզախ դատապարտումը՝ թէ «ցեղասպանութեան ճանաչումն ու հատուցումը կը մնան խառնաճաճ թուրք պետութեան ճակտին», կը ցնցէր ներկայ հազարաւոր ժողովուրդը եւ համայն աշխարհը:

Եւ տակաւին, Հայաստանի Հանրապետութեան Կեդրոնական Յանձնաժողովի եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համատեղ գործակցութեամբ, Հայաստան-Սփիւռք միացեալ թէ առանձին կազմակերպուած ձեռնարկները թափ առին Հայաստանէն մինչեւ Սփիւռք ու դարձան արթնութեան կոչ համայն աշխարհին՝ բողոքի քայլարշաւներով, մշակութային արարումներով, համագումարներով, արուեստի ցուցահանդէսներով, խաչքարերու տեղադրումով, հրատարակութիւններով, եւ այլն: Այս բոլոր իրագործումներուն մէջ առանցքային էր Վեհափառին

ներկայությունը: Սակայն այս բոլոր իրագործումները պիտի վերածուէին գեղեցիկ յուշի, եթէ չըլլար պատմական ու անկիւնադարձային քայլը Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, 100-ամեակի ձեռնարկներուն գագաթնակէտը հանդիսացող յանդուգն իրաւական գործընթացի մը սկիզբ դնելու որոշումը՝ միջազգային ատեանի մէջ հայկական հարցին իրաւական բնոյթ տալու նախաձեռնութիւնը:

Վեհափառը կազմակերպեց միջազգային իրաւաբաններու համագումարը, 22-25 Փետրուար 2012-ին Անթիլիասի Սայրավանքին մէջ, հրաւիրելով միջազգային օրէնքի մասնագէտներ, միջազգային ատեաններու դատաւորներ, փաստաբաններ, թիով երեսուն իրաւաբան օրէնագէտներ: Եւ առաջին անգամ ըլլալով, միջազգային օրէնքի տուեալներուն համաձայն, անոնք քննեցին հայ ժողովուրդի իրաւունքները հատուցելու հիմնաւորումները: Նկատի ունենալով հարիւր տարուան վաղեմութիւն ունեցող իրականութիւնը, եւ առաւել՝ թուրք պետութեան տարուէ տարի նոր օրէնքներու սահմանումով հայկական հողերու զաւթումը, կալուածները իրենց իրաւատէրերուն վերադարձնելու բոլոր կարելիութիւններու դռները փակած էին: Դատական հայց ներկայացնելը դարձած էր գրեթէ անկարելի ու դժուարին գործընթաց մը: Սակայն, ոչինչ կ'արգելակէր Կիլիկիոյ Հայրապետին հաւատքն ու վճռակամութիւնը՝ կեանքի վերածելու իր որոշումը: Կազմուեցաւ իրաւական յանձնախումբ եւ լծուեցաւ հայցի պատրաստութեան երկար ու դժուարին գործընթացին:

Արդարեւ, Թուրքիոյ Սահմանադրական Դատարանին մօտ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բացած դատը՝ պահանջելով Սիսի Կաթողիկոսարանին վերադարձը իր իսկական իրաւատիրոջ, ճանաչումէն հատուցում անցնելու գործընթացին առաջին գործնական իրաւական քայլն էր եւ կը հանդիսանար հայոց ցեղասպանութեան հարիւրամեակին առթիւ ամենէն խիզախ եւ կարեւորագոյն նախաձեռնութիւններէն մէկը:

Այս հայցին խորհրդանշական անդրադարձը եղաւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան չորս միաբաններու գործուղումը ի Կիլիկիա, Սիս, ուր Սիսի Կաթողիկոսարանի բարձունքէն հնչեց հայրապետական պատգամը՝ Նորին Սրբութեան. –

«Սա պահուն, երբ ւաւերակի վերածուած Կաթողիկոսարանէն հայրապետական օրհնութեան Մեր խօսքը կ'ուղղենք հայ ժողովուրդին, ինչպէ՞ս չի՞շել արտասուալից աչքերով ու դողդոջուն ձեռքերով երջանկայիշատակ Սահակ Խաչայեան Կաթողիկոսին գրած նամակները Օսմանեան կայսրութեան պատասխանատուներուն՝ մեր ժողովուրդին դէմ տեղի ունեցող ցեղասպանութիւնը կասեցնելու պահանջով:

«Ինչպէ՞ս չի՞շել սա պահուն, Օսմանեան կայսրութեան հրահանգը՝ հեռանալու Հայ Եկեղեցոյ խունկով ու աղօթքով օծուն այս պատմական Կաթողիկոսարանէն, եւ այնքա՛ն փտանգալից պայմաններուն մէջ խումբ մը նուիրեալ միաբաններու կողմէ Լուսաւորչի Աջին, սրբալոյս միւռոնի կաթսային, Բարձրբերդի Աւետարանին եւ այլ մատուցներուն, ձեռագիրներուն եւ եկեղեցական սպասներուն փոխադրութիւնը նախ Հալէպ ու ապա Անթիլիաս:

*«Ինչպե՞ս չի՞շել սա պահուն Կիլիկիոյ արի Հայրապետին, արքորի ու անորոշու-
թեան ճամբան ելլելէ առաջ, Կիլիկեան հողին վրայ գրի առած վերջին սրբատառ
կոնդակին ճամբով առ Աստուած բարձրացուցած աղօթքին հետեւեալ բառերը.–
"Կ'աղաչեմ զԱստուած հարցն մերոց... որպէսզի Տարուար Մասիսին կապող եւ հայ
արիւնով գեղազարդուած ծիածանը ի սփիւռս աշխարհի ցրուած հայութեան հա-
մար ըլլայ Աւետեաց երկիրը, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԵՒ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆ (զլիսագ-
րումը Սահակ Կաթողիկոսին կողմէ) առաջնորդող հրեղէն սիւնը" (Պատմութիւն
Կաթողիկոսաց Կիլիկիոյ, Բարգէն Ա. Աթոռակից Կաթողիկոս, 1939, Անթիլիաս, էջ
972):*

*«Ուրախ լեր քու երանական հանգիստիդ մէջ, երանաշնորհ Հայրապետ. դարձ-
եալ ազա՛ տ է ու անկա՛ իս մեր սիրելի հայրենիքը, հզօ՛ր է Մեծի Տանն Կիլիկիոյ Կա-
թողիկոսութիւնը իր առաքելութեամբ ու ծառայութեամբ, եւ աւելի քան երբեք՝ միա-
կա՛ մ է մեր ժողովուրդը ու պահանջատէր՝ իր բռնաբարուած իրաւունքներու պայ-
քարի ճանապարհին վրայ:*

*«Եթէ կորսնցուցինք հողեղէն Կիլիկիան, շինեցինք սակայն հոգեղէն Կիլիկիան:
Եւ սա պահուն, հոգեղէն Կիլիկիայէն, Անթիլիասի Մայրավանքէն միաբանութեան
ներկայացուցիչները եկած են խոնարհելու՝ մեր սրբացեալ նահատակներու եւ Միսի
Կաթողիկոսարանին մէջ հայրապետական գահ բարձրացած եւ մեր ժողովուրդը
առաջնորդած հայրապետներուն խնկելի յիշատակին առջեւ:*

*«Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբանութեան ներկայացուցիչները
եկած են հայու քրտինքով ու արիւնով թրծուած Կիլիկեան հողին ու յատկապէս
Միսի պատմական Կաթողիկոսարանի միւռոնաբոյր հողին վրայ կանգնած՝ մեր դա-
րաւոր Կաթողիկոսարանին վերադարձը պահանջելու եւ մեր ժողովուրդի պահան-
ջատիրական կեցուածքը վերահաստատելու:*

*«Միսի պատմական Կաթողիկոսարանի փլատակներէն թող հնչէ ու արձա-
գանգէ՛ ձայնը հայութեան՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան օրհներգին
ապագայատեսիլ բառերով՝*

*"Երբոր բացուին դռներն յուսոյ
Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ,
Չքնաղ երկիրն մեր Արմենիոյ
Երբ փայլէ իւր քաղցրիկ օրեր,
Երբոր ծիծառն ի բոյն դառնայ,
Երբոր ծառերն հագնին տերեւ,
Տանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ...":*

*«Այս երկրագունդին վրայ հայօրէն շնչող ու հայօրէն պայքարող սիրելի՛ հայր-
դի,
Յիշէ՛ քու նահատակներդ.*

***Յիշեցո՛ւր քու իրաւունքներդ. եւ՝
Արդարութիւն պահանջո՛ւ՛ք:***

Հարիւր տարի ետք, մեր դարաւոր ու բռնագրաւուած հողերուն վրայ, կրկին կը հնչէր մեր մեծաքանակ աղօթքներուն խանդաղակաթ մեղեդին եւ ալիք-ալիք արձագանգելով կը տարածուէր հեռուն, մինչեւ երկինք, մինչեւ յաւիտենականութիւն: Հարիւր տարի ետք, Կիլիկիոյ պատմական Կաթողիկոսարանէն կը հնչէր հայրապետական պատգամը Կիլիկիոյ Վեհափառին...:

Այստեղ կանգ չեն առներ մեր ժողովուրդի պահանջատիրութեան համար Վեհափառ Հայրապետին թափած ճիգերն ու նախաձեռնութիւնները: Նորին Սրբութիւնը հովանաւորեց Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակի նշումներու ծիրէն ներս տեղի ունեցած բազմաթիւ ձեռնարկներ եւ համագումարներ, ինչպէս Ձուիցերոյ Բողոքական Եկեղեցիներու Խորհուրդին եւ Արմէնօֆաս հիմնարկի նախաձեռնութեամբ կազմակերպուած հանդիսութիւնը Ձուիցերիոյ Պէյնէն գիւղին մէջ, ուր մեծ մարդասէր Անթոնի Քրաֆդ Պոնար հիմնած էր որբանոց մը ցեղասպանութենէն ճողոպրած որբերուն համար, այցելեց Աբընգէլի, ուր ծնած էր Փափա Քիւնցլէրը, որ դարձեալ կարեւոր դեր ունեցած է որբերու խնամատարութեան մէջ եւ տակաւին յայտարարութիւններ գուիցերիացի եւ հայ բարձրաստիճան անձնաւորութիւններու, ֆրանսական, գերմանական եւ իտալական թերթերուն շեշտելով հայոց պահանջատիրութեան զօրավիգ դառնալու հրամայականը, եւ քրիստոնէաներու պաշտպանութեան՝ Միջին Արեւելեան երկիրներու մէջ:

Հովանաւորեց շրջանային երեք համագումարներ, որոնք քննեցին հարիւրամեակի առթիւ իրագործելի ծրագիրները: Կազմակերպեց Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բոլոր թեմերու համատեղ համագումարը 9 Ապրիլ 2014-ին, թելադրելով Թեմակալ Առաջնորդներուն՝ համադրել 100-ամեակի աշխատանքները, հասնիլ միջազգային հանրութեան ուշադրութեան, օգտագործելով տեղական եւ միջազգային լրատուամիջոցները, ինչպէս նաեւ համատեղել հատուցման հողային, մարդկային եւ բարոյական վնասներու ցանկագրումը, ինչքերու, կալուածներու փաստաթուղթերու թուայնացումը Սփիւռքի բոլոր գաղթօճախներու մէջ, որոնք կը մնան հետապնդելի եւ համադրելի աշխատանքներ գալիք տասնամեակներուն: Միաբանական ընդհանուր ժողովին Վեհափառ Հայրապետը շեշտեց ծրագրուած կերպով հետամուտ ըլլալ ազգային պահանջատիրութեան գործընթացին: Հովանաւորեց հայոց ցեղասպանութեան հարիւրամեակի գործունէութիւնը արժեւորող Անթիլիասի մէջ կայացած եզրափակիչ համագումարը ու իր գնահատանքը յայտնեց հայոց ցեղասպանութեան հարիւրամեակի մարմիններու իրագործած աշխատանքներուն, ու շեշտեց, թէ այս ձեռնարկները պէտք է վերածել գործընթացի մը, որ շարունակուի մինչեւ մեր ազգին նպատակին իրականացումը: Վեհափառ Հայրապետը ընդգծեց, որ հայ ժողովուրդի իրաւունքներուն հարցը ամբողջ

հայրության հիմնահարցն է եւ հետեւաբար Հայաստանի եւ Մփիւռքի միացեալ գործունէութիւնը անառարկելի պայման է: Թէեւ մօտեցումները կրնան տարբեր ըլլալ, սակայն պետք է պահել ներքին ներդաշնակութիւնը եւ պահել համադրումը, միակամ կերպով ծրագրելով, միակամ գործելով եւ մանաւանդ կառչած մնալով պահանջատիրութեան սկզբունքներուն: Յիշեցնենք, որ Կաթողիկոսարանի պաշտօնաթերթ «Հասկ»ը լայնօրէն անդրադարձած է 100-ամեակի առթիւ եւ ընդհանրապէս Հայոց Յեղասպանութեան գծով Վեհափառ Հայրապետի աշխատանքներուն:

Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետը Անթիլիասը վերածեց ազգային պահանջատիրութեան պայքարի հնոցի:

Արամ Ա. Վեհափառ մեզի կը թողու մեր պատմութեան խորհրդանիշերը՝ Հայոց Յեղասպանութեան Որբերու «Արամ Պեղիքեան» Թանգարանը, Պիքֆայայի նորակերտ Սուրբ Աստուածածին վանքը՝ իր յուշարձանով, Նահատակաց խորանով, Մայիսեան յուշակոթողն ու Միսի Կաթողիկոսարանի վերադարձի պահանջով սկսած ազգային պահանջատիրութեան առաջին հայցը: Սրտառուչ խորհրդանիշեր, որոնք բաւարար են ո՛չ միայն «Յիշելու, Յիշեցնելու ու Պահանջելու», այլ նաեւ՝ հպարտանալու եւ սկսուած գործը առաւել հաւատքով ու վճռակամութեամբ շարունակելու:

Նորին Սրբութիւն Արամ Ա. Կաթողիկոսի 25-ամեայ ծառայութեան վաստակը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պայծառացման, եւ ազգային պահանջատիրութեան հետապնդման, արգասիքն է իր ներքին հոգեւոր ձայնի արձագանգին եւ հաստատումը իր անխախտ հաւատքին՝ իրագործելու հայ ժողովուրդի երազներուն իրականացումը:

Յաջողութիւններու եւ իրագործումներու փառապսակին արժանացած եւ արդարօրէն Վեհափառի կոչումը վաստակած, մեր պատմութեան մէջ, Արամ Ա. Կաթողիկոս եղաւ ու կը մնայ լուսաճակատ ու արի առաջնորդը եւ պարծանքը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Հայ Եկեղեցւոյ եւ հայ ժողովուրդին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Հայրապետին ի վերուստ տրուած է, բազմաթիւ հայորդիներու բնորոշումով, ըլլալու *երկրորդ Խրիմեան Հայրիկը*, տարբերութեամբ մը՝ այս անգամ շերեփը թուղթէ չէ, այլ պողպատէ՝ իր քաջ կեցուածքով ու անխախտ վճռակամութեամբ:

ՄԵՂԱ ՄԱՐԿՈՍԵԱՆ ԽՏՂՇԵԱՆ